ՖՐԻԴԱ ԲԱՀԱՐՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԷՄՄԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ԵԱՏՄ և արտաքին առևտրի վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու

ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ

Հակագնագցման (հակադեմպինգային) միջոցառումները նշանակալի տեղ են զբաղեցնում արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման գործիքակազմում, քանի որ լայնորեն կիրառվում են ներքին շուկայի և տեղական արտադրողների պաշտպանության նպատակով: Հակագնագցման կարգավորման նշանակությունն աճում է հատկապես տնտեսական ճգնաժամերի պայմաններում, որի համար որպես հիմք է ծառայում համապատասխան միջոցների ընտրողական բնույթը: Հակագնագցման կարգավորման տնտեսական հիմքերի հետազոտության արդիականությունը պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնցից առանձնացվել են առավել մեծ կարևորություն ունեցողները: Առաջին հերթին՝ վերջին տարիներին պաշտպանական միջոցների վերաբերյալ օրենսդրությունը նշանակալի դեր չի ունեցել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային գործունեության կարգավորման իրավական և տնտեսական մեխանիզմներում, սակայն Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունից ի վեր հակագնագցման կարգավորման իրավասությունը տեղափոխվել է վերազգային մակարդակ, որից հետո հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների վերաբերյալ օրենսդրությանը փոխարինելու եկավ ԵԱՏՄ բոլոր անդամ պետությունների համար

արտաքին առևտրում կիրառվող միասնական պաշտպանական միջոցների վերաբերյալ նորմատիվ-իրավական կարգավորումը: Երկրորդ՝ 2003 թվականից անդամակցելով Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետությունը վերագնահատեց հակագնացման քաղաքականության միջազգային կարգավորող մարմնի դերը, այդ թվում՝ Սակագների և առևտրի վերաբերյալ ընդհանուր համաձայնագրի (ГАТТ) հակագնացման օրենսդրությունը:

Հիմնաբառեր. *հակագնացում, հակագնացումային հետաքննություն, առևտրային վեճ, ԱՀԿ, ԵԱՏՄ*

JEL: F1, F10, F13

Միջազգային մրցակցային պայքարի արդի պայմաններում հայրենական արտադրողներին աջակցությունը դարձել է յուրաքանչյուր պետության առևտրային քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը: Շուկայում իրենց մասնաբաժինը մեծացնելու նպատակով ընկերությունները կարող են դիմել անբարեխիղճ մրցակցության՝ իջեցնելով արտադրանքի գինը, այսինքն՝ կիրառել գնագցում (դեմպինգ) տեղական արտադրողներին դուրս մղելու համար: Վերոնշյալի դեմ պայքարելիս կիրառվում է միջազգային հանրության կողմից ճանաչում ունեցող հակագնագցման տուրքերի ներմուծման գործընթացը:

Արդյոք հակագնագցման միջոցների կիրառումը անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի միջոց է՝ հօգուտ արդար առևտրի, թե դա «հովանավորչական խոչընդոտ» է: Նշված հարցը բազմիցս քննարկվել է տնտեսագիտական գրականության մեջ[1]: Առևտրի ազատականացման տեսանկյունից դիտարկելիս կարելի է եզրակացնել, որ հակագնագցման տուրքերն ունեն ավելի նշանակալի բացասական հետևանքներ, քան գնագցումն ինքնին[2]: Ընդհանուր առմամբ, հակագնագցման միջոցները մաքսատուրքերի ավելացման պատճառ են դառնում, ինչն էլ, իր հերթին, նշանակում է ազատ առևտրի խոչընդոտների ավելացում[3]: Հեղինակների մի մասը կարծում է, որ հակագնագցման տուրքերը կարելի է դիտարկել որպես արդյունաբերության նորաստեղծ ճյուղերին աջակցության ժամանակավոր միջոց՝ հատկապես զարգացող երկրների տեսանկյունից[4]: Սակայն, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, վերոնշյալ միջոցները կիրառվում են ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների կողմից՝ հաճախ արդեն ձևավորված և կայացած արդյունաբերության ճյուղերում, մեծ մասամբ՝ մեքենաշինական և քիմիական:

Որպես առևտրի ազատականացման պայմաններում խաղի կանոնների հաստատման նպատակով հակագնագցումային օրենսդրության կիրառման

---

[1] Տե՛ս **Hoekman B., Kostecki M.,** The Political Economy of the World Trading System: WTO and Beyond Oxford University Press, 2001:

[2] Տե՛ս **Nelson D.,** The Political Economy of Antidumping: A Survey // European Journal of Political Economy, №22, 2006, էջ 554–590:

[3] Տե՛ս **Blonigen B.A.,** Tariff-jumping antidumping duties // Journal of International Economics. Vol. 57. Iss. 1, 2002, էջ 31–50:

[4] Տե՛ս **Коваль А.Г., Трофименко О.Ю.,** Международные торговые споры в сфере применения мер защиты внутреннего рынка странами-членами ВТО: современные тенденции // Экономическая теория и хозяйственная практика: глобальные вызовы. СПб., “Гамма”, 2014, էջ 158–166:

օգտին լրացուցիչ փաստարկ կարելի է նշել այն, որ գործունեության տվյալ ոլորտը կարգավորվում է համաշխարհային ճանաչում ունեցող մակարդակով՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում: VI ГАТТ 1994 հոդվածի (հակագնագցում) կիրառման ԱՀԿ համաձայնագիրը վերոնշյալ ոլորտում հիմնական իրավական նորմն է: Դա թույլ է տալիս գանգատարկել հակագնագցման միջոցները, եթե վերջիններս օգտագործվել են ոչ թե առևտրի ոլորտում արդարություն հաստատելու, այլ ներմուծողների համար լրացուցիչ անհիմն խոչընդոտներ ստեղծելու համար: Տարբեր երկրներում հակագնագցման միջոցների կիրառման մասով առևտրային վեճերի ավելացումը վկայում է ի շահ հայրենական ընկերությունների հակագնագցման չարաշահման մասին[5]:

Հարկ է նշել, որ հակագնագցման տուրքերը հայրենական արտադրողների պաշտպանության ավելի հաճախ կիրառվող գործիքներից են՝ ի տարբերություն ներքին շուկայի պաշտպանության այնպիսի միջոցների, ինչպիսիք են փոխհատուցման և հատուկ պաշտպանական միջոցները[6]: Առևտրի համաշխարհային կազմակերպության վերջին տվյալների համաձայն՝ վերոնշյալ կազմակերպության հիմնադրման պահից ի վեր ԱՀԿ անդամ պետությունների կողմից կիրառվել են մոտ երեք հազար հակագնագցման տուրքեր: Անհրաժեշտ է նշել, որ մինչ ԵԱՏՄ անդամակցությունը, Հայաստանի Հանրապետությունը չի եղել վերոնշյալ գործիքը կիրառող պետություն: Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցությամբ պայմանավորված առավելությունների հետ մեկտեղ, հայրենական ընկերությունները բախվում են ազգային շուկայում օտարերկրյա ընկերությունների աճող մրցակցությանը: Ըստ վերոնշյալի՝ հայրենական ընկերությունների պաշտպանության նպատակով հակագնագցման միջոցների կիրառման օտարերկրյա փորձի վերլուծությունն արդիական է:

Անհրաժեշտ է դիտարկել հակագնագցման հետաքննության անցկացման փուլերը և այն խնդիրները, որոնց կարող են բախվել ընկերությունները վերոնշյալ գործընթացին թե՛ որպես նախաձեռնող, թե՛ որպես մեղադրյալ մասնակցելիս: Այստեղ հարկ է նշել, որ ԵԱՏՄ անդամ պետություններից հատկապես Ռուսաստանի Դաշնության արտահանողների նկատմամբ են առավել հաճախ կիրառվում նման միջոցներ: ԱՀԿ անդամ պետությունները, այդ թվում նաև Հայաստանը, կարող են դիմել առևտրային վեճերը կարգավորող ԱՀԿ համապատասխան մարմնին՝ վերոնշյալ միջոցները վիճարկելու նպատակով: Այլ կերպ ասած՝ ոչ միայն հակագնագցման տուրքերը կարելի է դիտարկել որպես հայրենական արտադրողների պաշտպանության միջոց. երկրի մասնակցությունը ԱՀԿ առևտրային վեճերին նույնպես համարվում է հայրենական ընկերությունների նկատմամբ հակագնագցման օրենսդրության կիրառման դեպքում չարաշահումների դեմ պայքարի միջոց:

Հակագնագցման հետաքննության անցկացման գործընթացը հստակ ներկայացված է VI ГАТТ 1994 հոդվածի կիրառման մասին ԱՀԿ համաձայնագրում, ինչպես նաև ազգային օրենսդրության մեջ: Ներքին շուկայի պաշտպանության միջոցների, այդ թվում հակագնագցման տուրքերի կիրառումը

---

[5] Տե՛ս **Debroy B., Chakraborty D.,** Anti-dumping: Global Abuse of a Trade Policy Instrument. New Delhi: Academic Foundation, 2007:

[6] Տե՛ս **Коваль А.Г., Сутырин С.Ф., Трофименко О.Ю.,** Защита национальных производителей в рамках ВТО // Вестник Санкт-Петербургского университета. Сер. 5. Экономика. Вып. 1, 2014, էջ 53–70:

նախկինում համապատասխան ազգային ինստիտուտների բացառիկ իրավունքն էր: Մինչ վերջերս միայն Եվրոմիությունում էին հետաքննություններն անցկացվում տարածաշրջանային մակարդակով: Հետաքննության անցկացման կանոնները և գործընթացները կարգավորվում են հատուկ կանոնակարգով[7]: Այլ ինտեգրացիոն միավորումներում հակագնացման հարցերը կամ ընդհանրապես չեն շոշափվում, ինչը հանգեցնում է տվյալ միավորման անդամ պետությունների ընկերությունների նկատմամբ հակագնացման միջոցների կիրառման հնարավորության (օրինակ՝ ACEAN, MERCOSUR), կամ սահմանվում են անդամ պետությունների միջև հակագնացման հետաքննությունների կարգավորման գործընթացներ (ինչպես օրինակ՝ NAFTA-ի դեպքում), որոնք չեն առնչվում երրորդ երկրների հետ հարաբերություններին:

2008 թվականի հունվարի 25-ից երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնացման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին համաձայնագրի ներմուծումից հետո Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության Մաքսային միությունը դարձավ աշխարհում երկրորդ ինտեգրացիոն կառույցը, որը կարգավորում էր հակագնացման հետաքննությունները տարածաշրջանային մակարդակով: Հետագայում 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 48–50 հոդվածները և 8-րդ հավելվածը լրացրին հակագնացման միջոցների կիրառման օրենսդրական բազան:

Հակագնացման հետաքննության իրականացման հիմնական փուլերը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.

Գծապատկեր 1

2011–2016 թթ. ընթացքում հակագնացման հետաքննությունների և կիրառվող միջոցների թիվն աճել է 1.6 անգամ: Առավել հաճախ հակագնացման միջոցներ կիրառող երկրները ներկայացված են գծապատկերում.



Գծապատկեր 2. *1995–2016 թթ. հակագնացման միջոցներ կիրառող առաջատար երկրները*

[7] Տե՛ս «ԵՄ անդամ պետություններից չծագող ապրանքների գնագցող ներմուծումից պաշտպանության մասին». ԵՄ խորհրդի 30.11.2009 №1225/2009 կանոնակարգ:

Հատկանշական է, որ կիրառվող հակագնագցման տուրքերի քանակով ԱՀԿ-ում առաջատարը ոչ թե զարգացած պետություններից որևէ մեկն է, այլ Հնդկաստանը: Վերջինս նաև ներգրավված է բազմաթիվ հակագնագցման հետաքննություններում: Հնդկաստանն ակտիվորեն սկսել է կիրառել նշված միջոցառումները 2000-ական թվականների սկզբից, և դրանց քանակը բավական տպավորիչ է[8]: 1995–2016 թթ. ընթացքում Հնդկաստանը կիրառել է 609 հակագնագցման միջոցներ, այն դեպքում, երբ ԱՄՆ-ի կողմից նախաձեռնվել են 395, իսկ ԵՄ-ի կողմից՝ 314 նման միջոցներ: Առևտրային քաղաքականության վերոնշյալ գործիքը շատ հաճախ կիրառվում է այնպիսի պետությունների կողմից, ինչպիսիք են Արգենտինան, Չինաստանը, Թուրքիան, Բրազիլիան և այլն:

Հակագնագցման հետաքննությունների մեջ երկրների ներգրավվածության ցուցանիշները շատ հաճախ չեն համապատասխանում դրանց դերին և համաշխարհային արտահանման մեջ մասնաբաժնին: Դա խոսում է այն մասին, որ հակագնագցման հետաքննությունների մեջ ներգրավվածության վրա ազդում են ինստիտուցիոնալ հայեցակետերը: Ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման համար պատասխանատու պետական մարմինների և ընկերությունների փոխազդեցության համակարգումը կարևոր դեր ունի արդյունավետ հետաքննության անցկացման գործում[9]: Այս առումով, առաջատարը հիմնականում խոշոր երկրներն են, որոնք տիրապետում են հարաբերությունների արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգի կառուցմանն անհրաժեշտ համապատասխան ռեսուրսներին: Ավելի փոքր տնտեսական ներուժ ունեցող զարգացող երկրներն առավել հաճախ բախվում են հակագնագցման միջոցներին, քան հանդես են գալիս որպես նախաձեռնող կողմ[10]:



Գծապատկեր 3. *1995–2016 թթ. նշված երկրների ընկերությունների նկատմամբ հակագնագցման միջոցների կիրառումը*

[8] Տե՛ս **Губина М.А.,** Практика применения антидемпинговых пошлин в Индии (на примере фармацевтической промышленности) // Экономическая теория и хозяйственная практика: глобальные вызовы. СПб., “Гамма”, 2014, էջ 108–117:

[9] Տե՛ս **Matschke X., Schottner A.,** Anti-dumping as Strategic Trade Policy under Asymmetric Information // Southern Economic Journal. Vol. 80, № 1, 2013, էջ 81–105:

[10] Տե՛ս **Neufeld I.N.**, Anti-dumping and Countervailing Procedures: Use or Abuse? Implication for Developing Countries. URL:http://unctad.org/en/Docs/itcdtab10_en.pdf

Մինչ ԵԱՏՄ անդամակցությունը, Հայաստանի Հանրապետությունը չի կիրառել հայրենական արտադրողների պաշտպանությանն ուղղված առևտրային քաղաքականության վերոնշյալ գործիքը: Դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կողմից, փաստորեն, հակագնագցման որևէ միջոց չի գործադրվել: Միևնույն ժամանակ, նշված ժամանակահատվածում մեր երկրի նկատմամբ կիրառվել է միայն մեկ հակագնագցման տուրք՝ 2009 թվականին:

Հարկ է նշել, որ հիշատակված ոլորտում բացարձակ առաջատարը Չինաստանն է, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջին՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը համաշխարհային առևտրի առաջատար արտահանող է և լուրջ մրցակից՝ երկրների մեծամասնության ներքին շուկաներում: Երկրորդ՝ հակագնագցման հետաքննությունների ժամանակ Չինաստանը չի դիտարկվում որպես շուկայական տնտեսություն ունեցող երկիր. նորմալ գինը որոշվում է ոչ թե արտահանման փաստացի տվյալների հիման վրա, այլ «փոխնակ երկրի» մեթոդով, այսինքն՝ տեղի է ունենում երրորդ երկրներում նույնանման ապրանքի արտադրության ծախքերի համեմատություն: Հակագնագցման տուրքերի կիրառման հետևանքով չինական կազմակերպությունների վնասները բավական մեծ են, ինչի պատճառով էլ Չինաստանը վերջին շրջանում ավելի հաճախ է դիմում ԱՀԿ վեճերի կարգավորման մարմին՝ կիրառվող միջոցները բողոքարկելու նպատակով[11]: ԵԱՏՄ անդամ պետություններից Ռուսաստանի Դաշնությունը ևս որոշակի դժվարություններ է ունեցել՝ ԱՀԿ անդամ պետությունների կողմից իր շուկայական կարգավիճակի ճանաչման հետ կապված: Սակայն ԱՀԿ-ին Ռուսաստանի Դաշնության միացման բանակցությունների գլխավոր նախապայմաններից մեկը վերջինիս շուկայական կարգավիճակի ամրագրումն էր:

Բացի Չինաստանից և Ռուսաստանից, երկրների (որոնց ընկերությունների նկատմամբ կիրառվել են հակագնագցման տուրքեր) առաջին տասնյակում են Հնդկաստանը, Ինդոնեզիան, Կորեայի Հանրապետությունը, Բրազիլիան, ԱՄՆ-ը և այլն: Դիտարկվող ժամանակահատվածում որպես մեկ միասնական մաքսային տարածքի՝ ԵՄ-ի նկատմամբ կիրառվել է 83 հակագնագցման միջոց, սակայն դրանք հիմնականում վերաբերում են որոշակի ընկերությունների: Այսպես՝ գերմանական ընկերությունների նկատմամբ կիրառվել են 52, ֆրանսիականների նկատմամբ՝ 30, անգլիականների նկատմամբ՝ 25, բելգիականների նկատմամբ՝ 18 հակագնագցման տուրքեր: Եթե գումարենք ԵՄ առանձին անդամ պետությունների նկատմամբ կիրառված հակագնագցման միջոցները և համեմատենք այլ երկրների հետ, ապա ԵՄ-ն վերոնշյալ ցանկում կգրավի երկրորդ տեղը՝ Չինաստանից հետո:

Հատկանշական է, որ հակագնագցման միջոցներ կիրառող առաջատար երկրների ցանկը գրեթե համընկնում է այն երկրների ցանկի հետ, որոնց ընկերությունների նկատմամբ կիրառվում են նման միջոցներ, ինչը կարելի է բացատրել նշված երկրների՝ միջազգային առևտրում ներգրավվածության բարձր մակարդակով, ինչպես նաև հակագնագցման հետաքննություններ անցկացնելու համար պահանջվող ռեսուրսների առկայությամբ: Բացի դրանից, նման իրավիճակը պայմանավորված է նաև հակագնագցման տուրքերի կիրառման ճյուղային կառուցվածքով:

---

[11] Տե՛ս **Li W., Yan Z., Sun W.,** The effect of antidumping and countervailing investigations on the market value of firms // International Review of Financial Analysis. Vol. 26, 2014, էջ 97–105:

Հակագնագցման միջոցների գրեթե 30%-ը վերաբերում է մետաղներին և դրանցից պատրաստված արտադրանքին: Ընդ որում, տնտեսության վերոնշյալ ճյուղում հակագնագցման տուրքեր առավել հաճախ կիրառվել են ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից: Հակագնագցման տուրքերի կիրառությունը հաճախադեպ է Չինաստանի և Ռուսաստանի Դաշնության մետաղ արտահանողների նկատմամբ: ՌԴ պարագայում դա կազմում է հակագնագցման տուրքերի 60%-ից ավելին: Հակագնագցման տուրքեր կիրառվում են նաև քիմիական արտադրանքի, ռետինի և պլաստմասսայե ապրանքների արտադրության, տեքստիլ արդյունաբերության, մեքենաշինության ոլորտներում:

Փորձագետները նշում են, որ որևէ երկրում հակագնագցման հետաքննություն կարող է նախաձեռնվել՝ ի պատասխան նշված երկրի որևէ ընկերության նկատմամբ կիրառված նման միջոցի[12], ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ հակագնագցման տուրքերը պետք է դիտարկել ոչ թե արդար առևտրի գաղափարի, այլ ժամանակակից համաշխարհային տնտեսության մեջ հովանավորչության դիտակետից: Ուստի ներքին շուկայի պաշտպանության այս միջոցի առավել հաճախ կիրառումը նախապայմաններ է ստեղծում դրանց կիրառման լեգիտիմությունը կասկածի տակ առնելու համար: Բավական է նշել, որ ԱՀԿ վեճերը կարգավորող մարմնի նախաձեռնած 488 վեճերից 107-ը (22%-ը) ներառում են VI ГАТТ հոդվածի կիրառման վերաբերյալ համաձայնագիրը (հակագնագցում):

Առևտրի համաշխարհային կազմակերպություն հայտի ներկայացումը բավականին ծախսատար է ինչպես կառավարության, այնպես էլ շահագրգիռ կողմ հանդիսացող և վերոնշյալ գործընթացը փաստացի նախաձեռնող ընկերությունների համար: Սակայն կիրառվող հակագնագցման տուրքերի պատճառով արտահանողների կրած վնասները, ինչպես նաև օտարերկրյա շուկաներ մուտքի սահմանափակումները բավական մեծ են, ուստի զարմանալի չէ առևտրային վեճերի նման քանակությունը[13]:

Առևտրային վեճերի համար որպես հիմք է ծառայում նորմալ գնի և դեմպինգային մարժայի հաշվարկման մեթոդաբանությունը, որը ԱՀԿ անդամ պետություններում տարբեր է: Մասնավորապես՝ շատ են բողոքները հատկապես ԱՄՆ-ի կողմից կիրառվող մեթոդաբանության նկատմամբ, քանի որ, կախված իրավիճակից, օգտագործվում են իրականությունն աղավաղող մոտեցումներ, ինչը նշանակալի վնաս է հասցնում օտարերկրյա արտահանողներին[13]: Փաստացիորեն, ԱՄՆ-ում հետաքննություններ իրականացնող համապատասխան մարմինը շտկում է նորմալ գինը՝ բարձրացնելով այն և դրանով իսկ հնարավորություն տալով սահմանելու ավելի բարձր դեմպինգային մարժա: Վերոնշյալից պարզ է դառնում, թե ինչու է ԱՄՆ-ը ԱՀԿ անդամ պետությունների նկատմամբ ներկայացված հայտերի մասով բացարձակ առաջատար համարվում: ԱՀԿ վեճերը կարգավորող մարմնի որոշումները հակադարձ ուժ չունեն, այսինքն՝ ԱՄՆ-ը անարդարացի ձևով պաշտպանում է իր

---

[12] Տե՛ս **Bown Ch.,** Trade Remedies and World Trade Organization Dispute Settlement: Why are so Few Challenged? // World Bank Policy Research Working Paper 3540. March, 2005. URL: http://www-wds.worldbank.org/external/default/WDSContentServer/WDSP/IB/2005/03/17/000012009_20050317142750/Rendered/PDF/wps3540.pdf

[13] Տե՛ս **Konings J., Vandenbussche H.,** Antidumping protection hurts exporters: firm-level evidence // Review of World Economics. Vol. 149, № 2, 2013, էջ 295–320:

[13] Տե՛ս **Попова Л.В.,** Роль Китая в системе разрешения споров в рамках ВТО // Устойчивое развитие: общество и экономика. СПб., “Нестор-История”, 2014, էջ 174–176:

ազգային արտադրողներին հակագնագցումային տուրքերի օգնությամբ, քանի դեռ հետաքննություն է վարվում:

ԵՄ-ի կողմից օգտագործվում է նորմալ գնի որոշման այլ մեթոդաբանություն, որը ևս բազմաթիվ հարցերի առաջացման հիմք է դառնում: Ընդ որում, ԵՄ-ն ավելի հաճախ հանդես է գալիս որպես հայցվոր, քան որպես պատասխանող: Կիրառվող հակագնագցման միջոցների թվով բացարձակ առաջատար հանդիսացող Հնդկաստանը հաճախ հետապնդվում է ԱՀԿ անդամ պետությունների կողմից, որի պատճառը նորմալ գնի որոշման մոտեցումների աղավաղումն է: Չինաստանը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը միացել է 2001 թվականից և բավականին հաճախ է օգտագործում վերոնշյալ կազմակերպության վեճերի լուծման մեխանիզմը թե՛ որպես հայցվոր, թե՛ որպես պատասխանող: Ընդ որում, վերջինիս ներկայացրած բոլոր հայցերը վերաբերում են ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից չինական ընկերություններից ազգային շուկայի պաշտպանության միջոցներին[14]: Դա բնութագրում է մի կողմից՝ ՉԺՀ անհամաձայնությունն ազգային ընկերությունների նկատմամբ կիրառվող հակագնագցումային միջոցներին, իսկ մյուս կողմից՝ երկրի ձգտումը նույնպես կիրառելու առևտրային քաղաքականության վերոնշյալ գործիքը:

Ներկայումս Եվրասիական տնտեսական միության կողմից կիրառվում են 18 հակագնագցման միջոցներ այն կազմակերպությունների պաշտպանության նպատակով, որոնք գտնվում են Միության տարածքում, սակայն հակագնագցման հետաքննությունները մեծ մասամբ նախաձեռնվում են ռուսական ընկերությունների կողմից: ԵԱՏՄ շուկան հիմնականում պաշտպանվում է Չինաստանից և Ուկրաինայից ներմուծվող ապրանքներից, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված երկրների ձեռնարկատերերը արտաքին շուկաներում բավականին ագրեսիվ վարք են դրսևորում: Վերջին շրջանում հայրենական արտադրողների ուշադրության կենտրոնում են նաև Հնդկաստանից ներկրվող ապրանքները. մեկ հակագնագցման միջոց վերոնշյալ երկրից ներմուծվող ապրանքատեսակի նկատմամբ արդեն իսկ կիրառվում է:

ԵԱՏՄ տարածքում մինչ որևէ պաշտպանական միջոցառման ուժի մեջ մտնելը պահանջվում է որոշակի ժամանակ, որը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝ հետաքննություն, որի ընթացքում հաստատվում է պաշտպանական մեխանիզմների օգտագործման անհրաժեշտությունն ու հիմնավորվածությունը, և որոշակի դեպքի վերաբերյալ որոշման ընդունման գործընթաց: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներքին շուկայի պաշտպանության վարչության կողմից հետաքննություն սկսելու համար պահանջվում է տվյալ ոլորտի ներկայացուցիչների դիմումը, որը պետք է ներկայացնի միջոցի կիրառման անհրաժեշտության ապացույցներ: Կարևոր պայման է, որ դիմողներին բաժին ընկնի ԵԱՏՄ միասնական շուկայում նշված ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի 25%-ը: Դիմումը ներկայացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողով, ստուգվում է հավաստիությունը և փաստերի առկայությունը, որից հետո որոշում է ընդունվում հետաքննություն սկսելու վերաբերյալ: Հետաքննությունը տևում է մոտավորապես մեկ տարի. իրականացված վերլուծության արդյունքների հիման վրա պատրաստվում է զեկույց, որոշման նախագիծ, հետաքննության արդյունքները քննարկվում են առևտրի գծով խորհրդատվական կոմիտեի նիստում՝

[14] Տե՛ս http://www.eurasiancommission.org/ru/act/trade/podm/investigations/Measures.aspx

հինգ անդամ պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Պաշտպանական միջոցառման կիրառման որոշման նախագիծը դրվում է քննարկման ԵՏՀ Կոլեգիայի նիստում, որտեղ ինը նախարարները ստորագրում են միջոցի կիրառման վերաբերյալ փաստաթուղթ՝ պարտադիր ԵԱՏՄ բոլոր անդամ պետությունների համար: Այս կամ այն միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել ԱՀԿ վեճերի լուծման մարմնի շրջանակներում: Ընդհանուր առմամբ, բողոքարկման գործընթացը կարող է ձգվել մինչև երկու տարի: Սկզբում կողմերը նշված հարցի վերաբերյալ պետք է անցկացնեն խորհրդակցություններ, և եթե դրանք հաջողությամբ պսակվեն, ստեղծվում են արբիտրաժային խմբեր, որոնց կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի մասնագետներ: Սովորաբար մեկ տարի անց հրապարակվում է նշված խմբի կողմից պատրաստված զեկույցը, որում հիմնավորվում է, թե որ կողմն է իրավացի, որը՝ ոչ: ԱՀԿ վեճերի լուծման մարմինը համապատասխան եզրակացություն է ձևակերպում այն մասին, թե արդյոք նշված միջոցը համապատասխանում է ԱՀԿ նորմերին, որից հետո խախտում կատարած երկրին կամ միությանը հանձնարարվում է այդ միջոցը համապատասխանեցնել արտաքին տնտեսական գործունեության ազատական միջոցներին: Ըստ այսմ՝ պաշտպանական տարբեր միջոցների կիրառման նպատակահարմարության որոշման ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ԱՀԿ իրավական համակարգի տեսանկյունից օրինականության խնդիրներին:

ԵԱՏՄ շրջանակներում իրականացվել է 41 հետաքննություն, որից ինը ներկայումս ընթացքի մեջ են: Իրականացված հետաքննություններից միայն ինն են հատուկ պաշտպանական միջոցների մասով. մնացածը հակագնացման հետաքննություններ են: Եվրոմիության, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Ուկրաինայի, Շվեյցարիայի, Նորվեգիայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Իսլանդիայի, Լիխտենշտեյնի, Չեռնոգորիայի և Ալբանիայի սանկցիոն քաղաքականության շրջանակներում կիրառվում է Ղրիմից և Սևաստոպոլից ծագող ապրանքների ներմուծման արգելք: Գոյություն ունեն մի շարք պատճառներ, որոնք պայմանավորում են ԵԱՏՄ անդամ պետությունների արտադրողների համար ներքին շուկայի պաշտպանության միջոցների շահեկանությունը՝ համեմատած արտաքին առևտրի կարգավորման այլ գործիքների հետ: Առաջին հերթին՝ ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման գործընթացը իրավական առումով բավական հանգամանալից մշակված է, այսինքն՝ որոշակի պայմաններում արտադրողներն ունեն վերոնշյալ պաշտպանության օրենսդրորեն սահմանված իրավունքը: Երկրորդ՝ նշված գործիքը համաշխարհային ասպարեզում ունի լայն կիրառություն և ընդունվում է ԱՀԿ-ի կողմից: Երրորդ՝ ի տարբերություն սովորական մաքսատուրքերի, հատուկ, հակագնացման և պաշտպանիչ միջոցները կիրառվում են ԱՊՀ ծագում ունեցող ապրանքների նկատմամբ, որոնց պարագայում գործում է ազատ առևտրի անմաքս ռեժիմ:

Ամփոփելով հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական միությունը պետք է ընդլայնի ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառությունը: Սակայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հետաքննություններ վարելու համար որպես հիմք պետք է ծառայեն ԵԱՏՄ անդամ պետությունների ընկերությունների կողմից ներկայացված դիմումները: Անհրաժեշտ է, մի կողմից՝ բիզնեսը ավելի հաճախ դիմի վերազգային ինստիտուտներին՝ մրցունակությունը բարձրացնելու ուղղությամբ աջակցություն ստանալու նպատակով, մյուս կողմից՝ գիտաժողովների և սեմինարների մի-

ջոցով հարկ է բարձրացնել գործարարների իրազեկվածության մակարդակը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տիրապետման ներքո գտնվող ներքին շուկայի պաշտպանության միջոցների վերաբերյալ, այդ թվում՝ հակագնացման գործընթացների իրականացման առանձնահատկությունների մասով: Այսպիսով՝ իրավասու մարմինների և մասնավոր կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների և փոխհամագործակցության խորացումը ազգային շահերի պաշտպանությանն ուղղված հաջողված առևտրային քաղաքականության գրավականն է:

Օգտագործված գրականություն

1. ԵՄ անդամ պետություններից չծագող ապրանքների գնագցող ներմուծումից պաշտպանության մասին. ԵՄ խորհրդի 30.11.2009 №1225/2009 կանոնակարգ:
2. Губина М.А., Практика применения антидемпинговых пошлин в Индии (на примере фармацевтической промышленности) // Экономическая теория и хозяйственная практика: глобальные вызовы. СПб., “Гамма”, 2014.
3. Коваль А.Г., Трофименко О.Ю., Международные торговые споры в сфере применения мер защиты внутреннего рынка странами-членами ВТО: современные тенденции // Экономическая теория и хозяйственная практика: глобальные вызовы. СПб., “Гамма”, 2014.
4. Коваль А.Г., Сутырин С.Ф., Трофименко О.Ю., Защита национальных производителей в рамках ВТО // Вестник Санкт-Петербургского университета. Сер. 5. Экономика. Вып. 1, 2014.
5. Попова Л.В., Роль Китая в системе разрешения споров в рамках ВТО // Устойчивое развитие: общество и экономика. СПб., “Нестор-История”, 2014. http://www.eurasiancommission.org/ru/act/trade/podm /investigations/Measures.aspx
6. Hoekman B., Kostecki M., The Political Economy of the World Trading System: WTO and Beyond Oxford University Press, 2001.
7. Nelson D., The Political Economy of Antidumping: A Survey // European Journal of Political Economy, №22, 2006.
8. Blonigen B.A., Tariff-jumping antidumping duties // Journal of International Economics. Vol. 57. Iss. 1, 2002.
9. Debroy B., Chakraborty D., Anti-dumping: Global Abuse of a Trade Policy Instrument. New Delhi: Academic Foundation, 2007.
10. Matschke X., Schottner A., Anti-dumping as Strategic Trade Policy under Asymmetric Information // Southern Economic Journal. Vol. 80., № 1, 2013.
11. Neufeld I.N., Anti-dumping and Countervailing Procedures: Use or Abuse? Implication for Developing Countries. URL:http://unctad.org /en/Docs/itcdtab10_en.pdf
12. Li W., Yan Z., Sun W., The effect of antidumping and countervailing investigations on the market value of firms // International Review of Financial Analysis. Vol. 26, 2014.
13. Bown Ch., Trade Remedies and World Trade Organization Dispute Settlement: Why are so Few Challenged? // World Bank Policy Research Working Paper 3540. March 2005. URL: http://www.wds.worldbank.org/external/default/WDSContentServer/WDSP/IB/2005/03/17/000012009_20050317142750/Rendered/PDF/wps3540.pdf
14. Konings J., Vandenbussche H., Antidumping protection hurts exporters: firm-level evidence // Review of World Economics. Vol. 149, № 2, 2013.

ФРИДА БАГАРЯН
Доцент кафедры микроэкономики и организации предпринимательской деятельности АГЭУ, кандидат экономических наук

ЭММА МОВСИСЯН
Заместитель начальника управления ЕАЭС и внешней торговли Министерства экономического развития и инвестиций РА, кандидат экономических наук

Антидемпинговые средства в современных экономических условиях: международные тенденции и опыт Армении.– Антидемпинговые меры играют важную роль как инструмент государственного регулирования внешней торговли, поскольку они широко используются для защиты внутреннего рынка и местных производителей. Важность антидемпингового регулирования быстро возрастает особенно в условиях экономических кризисов, основой которых является избирательный характер антидемпинговых средств. Актуальность исследования экономической основы антидемпингового регулирования обусловлена рядом причин, из которых наиболее важными являются следующие. Прежде всего, в последние годы законодательство по защитным мерам не сыграло существенной роли в правовых и экономических механизмах регулирования внешнеторговой деятельности РА, но с момента присоединения Республики Армения к Евразийскому экономическому союзу компетенция антидемпингового регулирования была перенесена на наднациональный уровень с едиными специальными защитными, антидемпинговыми и компенсационными мерами для всех государств-членов ЕАЭС. Во-вторых, после присоединения к Всемирной торговой организации в 2003 году Армения пересмотрела роль Международного антидемпингового регулирующего органа, включая также антидемпинговое законодательство ГАТТ.

Ключевые слова: *антидемпинг, антидемпинговое расследование, коммерческий спор, ВТО, ЕАЭС.*
JEL: F1, F10, F13

FRIDA BAHARYAN
Associate Professor at the Chair of Microeconomics and Organization of Entrepreneurship at ASUE, PhD in Economics

EMMA MOVSISYAN
Deputy Head of EAEU and Foreign Trade Department of Ministry of Economic Development and Investments of the RA, PhD in Economics

Anti-Dumping Measures in the Current Economic Conditions: International Tendencies and Experience of Armenia.– Anti-dumping measures play a considerable role as an instrument of foreign trade state regulation activities as they

are widely used to protect the domestic market and local producers. The importance of anti-dumping regulation is rapidly growing especially under the conditions of economic crises, the basis of which is the selective nature of anti-dumping remedies. The relevance of economically based anti-dumping regulation research is conditioned by a number of reasons, from which the most important ones have been separated. Firstly, in recent years protective measures legislation hasn't played a significant role in the legal and economic mechanisms of the RA foreign trade activities regulations, but since the accession of the Republic of Armenia to Eurasian Economic Union the competence of anti-dumping regulation has been transferred to the supranational level followed by special protective, anti-dumping and countervailing measures for all EAEU Member States. Secondly, since joining the World Trade Organization in 2003, Armenia re-evaluated the role of the International Anti-dumping Regulatory Authority, including the anti-dumping legislation of GATT.

Key words: *anti-dumping, anti-dumping investigation, commercial dispute, WTO, EAEU.*
JEL: F1, F10, F13